ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գեղամ Պետրոսյան, Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար-1918 թ. հունիս) (Երևան, ԵՊՀ հրատ., 2018, 268 էջ+12 ներդիր)

1917 թ. փետրվարյան հեղափոխությունը լուրջ ազդեցություն ունեցավ նախկին Ռուսական կայսրության կազմում գտնվող ազգությունների ճակատագրի վրա։

Արմատական և որակական փոփոխությունները, որոնք կատարվեցին հեղափոխությանը հաջորդող ամիսներին, նոր խնդիրների առջև կանգնեցրին նաև հայ հասարակական-քաղաքական շրջանակներին. նրանք ստիպված էին ուղիներ որոնել՝ մի կողմից փրկելու հայ ժողովրդին վերջնական ոչնչացումից, մյուս կողմից, օգտագործելով ստեղծված իրավիճակը՝ վերակերտելու հայոց անկախ պետականությունը։ Այս խնդիրները լուծելու համար հայության քաղաքական շրջանակները ունեին ընտրության սահմանափակ հնարավորություններ։ Օսմանյան կայսրության իրագործած ցեղասպանության հետևանքով հայաթափվել էր Արևմտյան Հայաստանը, ֆիզիկապես ոչնչացվել արևմտահայության մեծ մասը։ Կովկասյան ռազմաճակատի կազմալուծումից հետո իրական վտանգ էր առաջացել Օսմանյան կայսրության կողմից ցեղասպանությունը նաև արևելահայության նկատմամբ շարունակելու։ Իր կամքից անկախ՝ Առաջին համաշխարհային պատերազմի թատերաբեմում հայտնված հայությունը 1917 թ. փետրվար-1918 թ. հունիս ամիսներին ստիպված էր պայքարել և՛ ռազմական, և՛ դիվանագիտական ճակատներում։

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանի կողմից գիտական հանրությանը ներկայացված պատմադիվանագիտական գրականության մեջ կարևոր ներդրում ունեցող սույն աշխատությունը համակողմանի և խորքային ուսումնասիրություն է հայոց պետականության վերականգնման հիմնահարցի վերաբերյալ։ Հեղինակի այս աշխատանքը նոր լույսի ներքո է ներկայացնում Տրապիզոնի, Բաթումի թուրք-անդրկովկասյան և թուրք-հայկական բանակցային գործընթացները։

Տպավորիչ է մենագրության աղբյուրագիտական հենքը։ Գ. Պետրոսյանը իր հետազոտությունը իրականացնելիս գիտական շրջանառության մեջ է դրել ինչպես Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ Թուրքիայի կառավարությանը կից օսմանյան արխիվներից փաստաթղթեր։ Հեղինակը օգտվել է նաև հայկական, ռուսական, ֆրանսիական, գերմանական և թուրքական տպագիր աղբյուրներից։

Մենագրության առաջին գլխում («Քաղաքական դրությունը Անդրկովկասում 1917 թ. փետրվարյան հեղափոխության և հոկտեմբերյան հեղաշրջումից հետո») հեղինակը անդրադարձել է Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՈՄ) գործունեությանը, դրանում տեղ գտած թերացումների պատճառներին։

Քննության առնելով Անդրկովկասի անկայուն և խառնաշփոթ վիճակը և ՕԶԱԿՈՄ-ի հեղինակազրկումը՝ Գ. Պետրոսյանը ընդգծում է. «Շարունակ վատթարացող քաղաքական, տնտեսական, սոցիալական պայմանները և անիշխանության հասած կառավարման ճգնաժամը անհրաժեշտություն առաջացրին տեղական առանձնահատկությունները հաշվի առնելով 1917 թ. վերջերին ստեղծել նաև երրորդ իշխանությունը (բազմիշխանություն)՝ հանձինս հայոց, վրաց և թաթարների Ազգային խորհուրդների» (էջ 14)։

Հեղինակը ներկայացնում է Հայոց Ազգային ժողովի և Հայոց Ազգային խորհրդի ստեղծման պատմությունը՝ նշելով, որ իրադարձությունների բերումով Ազգային ժողովը գումարվեց ընդամենը մեկ անգամ, և Հայոց Ազգային խորհուրդը իր ձեռքում կենտրոնացրեց հայկական քաղաքական շահերի ներկայացուցչության և ազգային հարցերի իրավասության լիազորությունները (տե՛ս էջ 20)։

Գ. Պետրոսյանը, արխիվային և հուշագրական հարուստ հենքի վրա հիմնվելով՝ մանրամասն քննության է ենթարկել Անդրկովկասի ներքին և արտաքին քաղաքական դրությունը 1917 թ. հոկտեմբեր-1918 թ. փետրվար ամիսների ընթացքում։ Երբեմն իրարամերժ թվացող ներքին և արտաքին զարգացումները ենթարկելով խորը և համակողմանի վերլուծության՝ հեղինակը բացահայտում է դրանց պատճառահետևանքային կապը և մատնանշում տրամաբանական հանգուցալուծումները։ Մենագրությունում լուսաբանվում է, թե ինչպես Երզնկայի զինադադարը և կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի հեռանալը Օսմանյան կառավարությունը ճարպկորեն օգտագործեց իր ռազմատենչ ու զավթողական պլանները իրականացնելու համար (տե՛ս էջ 30)։

Հեղինակը առանձին քննության է ենթարկում Անդրկովկասյան կոմիսարիատի լուծարումից հետո ստեղծված նոր մարմնի՝ Սեյմի արտաքին քաղաքականությունը մասնավորապես Տրապիզոնում թուրք–անդրկովկասյան բանակցությունները սկսելու նախօրեին։

Մենագրության երկրորդ գլուխը վերնագրված է «Թուրք-անդրկովկասյան բանակցությունները Տրապիզոնում. Անդրկովկասի անկախացումը», որտեղ Գ. Պետրոսյանը անդրադառնում է Տրապիզոնի բանակցություններում թուրքերի կողմից Անդրկովկասը անկախ հռչակելու շարժառիթներին և նպատակներին, ինչպես նաև Հայկական հարցի արծարծումներին։ Բացահայտելով թուրքական դիվանագիտության մարտավարությունը՝ հեղինակը նշում է. «Դիվանագիտական բանակցային գործընթացների մարտավարությունը մղելով առաջին պլան՝ նա (Թուրքիան- Ժ. Մ.)

փորձում էր նախ շեղել, մոլորության մեջ գցել, ապա թուլացնել Անդրկովկասի կառավարության և ժողովուրդների, մասնավորապես հայության զգոնությունը և դիմադրողական ոգին» (էջ 41)։

Վեր հանելով Տրապիզոնում ընթացող դիվանագիտական բանակցությունների ողջ պատկերը՝ հեղինակը լուսաբանում է նաև Անդրկովկասի խաղաղարար պատվիրակության հայ անդամներ Ալ. Խատիսյանի և Հ. Քաջազնունու կողմից Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցի բարձրացմանն ուղղված քայլերը, որոնք թուրքական պատվիրակությունը որակեց որպես միջամտություն Թուրքիայի ներքին գործերին (տե՛ս էջ 76)։

Այս գլխում հեղինակը մանրամասն քննության է ենթարկել նաև այն խնդիրը, թե ինչպիսի ծանր և փակուղային վիճակ էր ստեղծվել բանակցություններում, որից դուրս գալու համար էլ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը ստիպված էր Թուրքիային տարածքային զիջումներ անել, որը պատվիրակության ներսում տարաձայնությունների և բուռն վիճաբանությունների առանցքային թեմա դարձավ։ Հեղինակը հարուստ փաստական նյութի հիման վրա վերլուծության է ենթարկում այն իրողությունը, որ դիվանագիտական և ռազմական ճակատում հայությունը միայնակ էր դիմագրավում Օսմանյան Թուրքիայի զավթողական նկրտումներին։ Այսպիսի իրավիճակը պայմանավորված էր նրանով, որ վրացիները և թաթարները իրենց խնդիրները հիմնականում լուծում էին հայկական տարածքները զիջելու միջոցով։ Գ. Պետրոսյանը, անդրադառնալով հայության դիվանագիտական և ռազմական ձախողումներին, արդարացիորեն մատնանշում է ոչ միայն արտաքին, այլև ներքին պատճառները։ Դժվար է հակափաստարկ բերել հեղինակի այն դիտարկմանը, որ «երկրամասում ստեղծված ռազմաքաղաքական աննպաստ պայմաններում հայ քաղաքական ուժերը ուշացումով էին արձագանքում իրադարձություններին և ներկուսակցական, միջկուսակցական շահերի ու տարաձայնությունների հետևանքով էլ չկարողացան ժամանակին գործունեության ճկուն, միասնական տեսակետ մշակել, որն էլ, անշուշտ, բացասաբար ազդեց քաղաքական, դիվանագիտական գործընթացների վրա» (էջ 119)։

Մենագրության երրորդ գլուխը նվիրված է Բաթումում Թուրքիայի և անկախ Անդրկովկասյան Հանրապետության դիվանագիտական բանակցությունների առաջին փուլին՝ երեք անկախ հանրապետությունների ստեղծմանը։ Հեղինակը մանրամասն վերլուծության է ենթարկում Բաթումի բանակցությունների նախօրեին Անդրկովկասում և նրա շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը, մասնավորապես դաշնակիցներ հանդիսացող Օսմանյան Թուրքիայի և Գերմանիայի միջև առաջացած խնդիրները, 1918 թ. ապրիլի 27-ին Կոստանդնուպոլսում կնքված գերմանա-թուրքական գաղտնի դաշնագիրը, որով Անդրկովկասը բաժանվեց ազդեցության ոլորտների Թուրքիայի և Գերմանիայի միջև։

Մանրազնին հետազոտության ենթարկելով Գերմանիայի հետապնդած նպատակները՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ «իրականում հայերի օգտին Գերմանիայի պաշտոնական և ոչ պաշտոնական նախազգուշացումները Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությանը ընդամենը դիվանագիտական խաղեր էին, որոնցով փորձում էին ձերբազատվել Հայոց ցեղասպանության և հայրենազրկության մեղսակցության փաստից» (էջ 162)՝ միաժամանակ ընդգծելով, որ Գերմանիան հանուն հայերի չէր կարող վտանգել հարաբերությունները Թուրքիայի հետ: Հեղինակի տեսադաշտից չեն վրիպել նաև վրաց–գերմանական անդրկուլիսյան բանակցությունները, որոնք տեղի էին ունենում Բաթումում, և որոնց շնորհիվ Վրաստանը հռչակվեց անկախ, իսկ Անդրկովկասի Հանրապետությունը կազմալուծվեց:

Մենագրության վերջին՝ չորրորդ գլուխը ներկայացնում է Բաթումի հայ-թուրքական դիվանագիտական բանակցությունների երկրորդ փուլը: Գ. Պետրոսյանը փաստական հարուստ նյութի հիման վրա ներկայացնում է Անդրկովկասի սեյմի լուծարումից հետո ստեղծված իրավիճակը՝ նշելով, թե ինչու Օսմանյան Թուրքիան հանդուրժեց Հայաստանի Հանրապետության ստեղծումը, և ինչու թուրքերը հունիսի 3-ին հայկական պատվիրակությանը ստիպեցին Բաթումում ստորագրել փաստաթուղթ, որով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում էր ամբողջ պատերազմի ընթացքում դիվանագիտական հարաբերություններ չունենալ Օսմանյան կայսրության դեմ պատերազմական վիճակում գտնվող պետությունների հետ (տե՛ս էջ 234):

Հեղինակը մանրամասնորեն և համակողմանիորեն վերլուծում է պատմական փաստերը՝ լույս սփռելով այն հանգամանքների վրա, թե ինչով էր պայմանավորված Օսմանյան Թուրքիայի կողմից Բաթումի հաշտության պայմանագիրը ստորագրելու շտապողականությունը: Փաստորեն, Թուրքիան, Հայաստանի Հանրապետության հետ կնքելով հաշտություն, այդ դաշնագրի ուժով մի կողմից ապահովում էր իր թիկունքը հայկական զորամիավորումների հարձակումներից, իսկ մյուս կողմից իրեն իրավունք էր վերապահում խորհրդային Բաքվում ու նրա արվարձաններում տեղակայված հայկական զինյալ ջոկատները զինաթափելու և հեռացնելու տարածաշրջանից (տե՛ս էջ 241):

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանի այս մենագրությունը անկասկած լուրջ ներդրում է հայ պատմագիտության մեջ, իսկ մենագրության ռուսերեն թարգմանությունը հնարավորություն կտա ռուսաստանյան գիտական շրջանակներին ծանոթանալու արժեքավոր հետազոտությանը, որում կան նաև Ռուսաստանի պատմության կարևոր դրվագներ:

ԺԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ներկայացվել է՝ 26.09.2018, ընդունվել է տպագրության՝ 26.04.2019